

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Լրացուցիչ մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգի» մշակման հիմքը «ԵՊՀ զարգացման (2016-2020 թթ.) ռազմավարական ծրագիրն» է:
2. Լրացուցիչ մասնագիտական կրթությունը (այսուհետ՝ ԼՄԿ) սահմանվում և կարգավորվում է օրենսդրական ու ենթօրենսդրական հետևյալ ակտերով ու այլ փաստաթղթերով.
 - 2.1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999:
 - 2.2. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենք (նախագիծ), 2018:
 - 2.3. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք (նախագիծ), 2018:
 - 2.4. Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգ, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1062-Ն որոշման հավելված N 1:
 - 2.5. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգ, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1062-Ն որոշման հավելված N 2:
 - 2.6. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2017-2022 թթ.), 2017:
 - 2.7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն, 2014:
 - 2.8. Բոլոնիայի գործընթացին և ԼՄԿ-ին վերաբերող այլ փաստաթղթեր:
 - 2.9. Меморандум непрерывного образования Европейского Союза, 2000.

II. ԼՄԿ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. Շուրջ երեք տասնամյակ առաջ ձևավորվեց հարատև կրթության (այսուհետ՝ ՀԿ) հայեցակարգը՝ որպես կրթության զարգացման միջազգային ռազմավարություն: Այսօր այն Բոլոնիայի գործընթացի և եվրոպական կրթական քաղաքականության տասը կարևորագույն ուղղություններից մեկն է: ՀԿ-ի բոլոր տարատեսակների մեջ առանձնապես կարևորվում է ԼՄԿ-ն: Ինչո՞վ է պայմանավորված նրա աննախադեպ զարգացումը:

4. 21-րդ դարում տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, մշակութային և մի շարք այլ իրողություններ բարձրագույն կրթությանը ներկայացնում են մարտահրավերներ, որոնց դիմագրավելու համար համալսարանները պետք է վերագնահատեն իրենց դերը՝ մեծացնելով փոփոխություններին հարմարվելու կարողությունը և սոցիալական պատասխանատվությունը: Այսօր համալսարանների զարգացումը մեծապես պայմանավորված է նաև ԼՄԿ-ով: Կրթության ժամանակակից հայեցակարգը հենքային և լրացուցիչ կրթությունը դիտարկում է որպես մեկ համակարգի տարրեր: Հենքային կրթության եվրոպական բոլոր չափանիշները տարածելով ԼՄԿ-ի վրա՝ Բոլոնիայի գործընթացը փորձում է ապահովել նրա որակը:

III. ԼՄԿ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

5. ԼՄԿ-ն ոչ ֆորմալ կրթության իրականացման ձև է, որի նպատակը ԼՄԿ ծրագրի իրացման միջոցով անհատին գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ձևավորելու, կատարելագործելու և արդիականացնելու հնարավորություն տալն է:

5.1. ԼՄԿ հայեցակարգի նպատակն է սահմանել Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) ԼՄԿ-ի զարգացման ուղիներն ու միջոցները՝ ապահովելու համալսարանում աշխատողների ու սովորողների գիտելիքների նորացումը և կրթական պահանջմունքների բավարարումը:

6. Հայեցակարգի հիմնական խնդիրներն են՝

1. ընդլայնել անհատի կրթական հնարավորությունները,
2. պայմաններ ստեղծել ԵՊՀ աշխատողների և սովորողների ինքնակատարելագործման համար,
3. խթանել գիտամանկավարժական կազմի ակադեմիական շարժունությունը,
4. նպաստել Հայաստանը տարածաշրջանում մրցունակ և դինամիկ գիտահենք տնտեսական տարածք դարձնելուն,
5. ներգործություն ունենալ բարձրագույն կրթության զարգացման ռազմավարության նորագույն բոլոր հայեցակետերի վրա (շարժունություն, որակավորումների ճանաչում, հեռավար ուսուցում և այլն):

7. Հայեցակարգի հիմնական սկզբունքներն են՝

1. կրթության անընդհատություն և շարունակականություն,
2. կրթության մատչելիություն,
3. կրթական հետազոծերի անհատականացում,
4. անձի և հասարակության հարաբերությունների ներդաշնակեցում (ԼՄԿ քաղաքականության համաձայնեցում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների հետ):

IV. ԼՄԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

8. ԵՊՀ-ում իրականացվող ԼՄԿ ծրագրերի համակարգումը և վերահսկողությունը վերապահվում են Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը: Նման ծրագրեր իրականացնող ԵՊՀ ստորաբաժանումները պետք է առաջնորդվեն սույն հայեցակարգի դրույթներով և իրենց կողմից իրականացված ծրագրերի մասին տարեկան տեղեկատվություն ներկայացնեն վարչությանը՝ համակարգելու ԵՊՀ ԼՄԿ ծրագրերը:

9. ԼՄԿ հարցերը համակարգելու նպատակով ԵՊՀ պորտալում բացվել է «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքէջը (<http://extension.yso.am>), որում տեղադրված են ԼՄԿ-ին առնչվող բոլոր փաստաթղթերը, ծրագրերը և այլ նյութեր:

10. Առանձնահատկությունները՝

10.1. ԼՄԿ ծրագրով ուսուցումը չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ ՀՀ օրենքներով սահմանված դեպքերի:

10.2. ԼՄԿ ծրագրերը կազմակերպվում են խմբային և անհատական ուսուցմամբ, կարճաճամկետ և երկարաժամկետ (առավելագույնը մինչև 5 ամիս) դասընթացներով:

10.3. ԼՄԿ ծրագրին մասնակցելու իրավունք ունի ԵՊՀ աշխատակիցներից յուրաքանչյուր ոք կամ ՀՀ քաղաքացի, եթե բավարարում է տվյալ դասընթացի մուտքային պահանջները: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ պատվիրատուն որոշակի նպատակով առաջադրում է ունկնդիրների թիրախային խումբ:

11. ԵՊՀ-ում ԼՄԿ ծրագրերն իրականացվում են վճարովի հիմունքով: Ընդ որում, իր աշխատակիցների նպատակային ուսուցման դեպքում վճարում է ինքը՝ համալսարանը: Այլ կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց ծառայություններ մատուցելու դեպքում ԵՊՀ-ն նրանց հետ կնքում է պայմանագիր, որին որպես անբաժանելի մաս կցվում են՝

1. դասընթացի ծրագիրը,
2. դասընթացի իրականացման տևողությունը, ժամկետը և ժամանակացույցը,
3. դասընթացի ավարտին տրվող փաստաթղթի ճանաչման վերաբերյալ դրույթներ,
4. այլ դրույթներ՝ կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի պահանջներին համապատասխան:

12. Ուսուցումն իրականացվում է 3 փուլով՝

1. ԼՄԿ ծրագրի և ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակում, խմբի ձևավորում,
2. դասընթացի իրականացում,
3. ուսումնառության արդյունքների գնահատում:

13. Ուսուցման մոդուլային ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1. դասընթացի նպատակը,
2. մուտքային պահանջները ունկնդիրների նկատմամբ (եթե առկա են). բարձրագույն կրթության դեպքում՝ պետական դիպլոմի առկայությունը,
3. ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները,
4. կատարման չափանիշները՝ ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար,
5. ուսուցման նվազագույն տևողությունը՝ ժամերով,
6. պարապմունքի տեսակները՝ ըստ թեմաների:

14. ԵՊՀ-ում իրականացվող ԼՄԿ ծրագրերի ուսումնական պլանները կազմվում են համապատասխան ֆակուլտետի կողմից՝ ծրագրի ղեկավարի պատասխանատվությամբ: ԼՄԿ ծրագրերի բովանդակային հարցերը քննարկվում են ԵՊՀ

մեթոդական խորհրդում և ըստ մասնագիտությունների՝ համապատասխան ֆակուլտետի խորհրդում: Ծրագրերի խորհրդատվությունն ապահովում են ֆակուլտետների համակարգողները:

15. Վճարովի հիմունքով իրականացվող ծրագրերի դեպքում ֆինանսական հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով կամ ԵՊՀ ռեկտորի հրամանով: Ծրագրերում ընդգրկված դասախոսները վարձատրվում են ըստ ուսումնական բեռնվածության կամ ժամավճարով, հրավիրյալ դասախոսները՝ ժամավճարով:

V. ԼՄԿ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

16. ԼՄԿ ծրագիրն համարվում է կատարված՝ ուսումնառության արդյունքներն ապահովելու դեպքում:

17. ԼՄԿ ծրագրով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձին տրվում է ԵՊՀ-ի կողմից սահմանված համապատասխան փաստաթուղթ (վկայական կամ հավաստագիր), որում պարտադիր կարգով կատարվում է նշում ունկնդրի ուսումնառության արդյունքների և ժամաքանակի մասին: Վկայականի (հավաստագրի) ներդիրը համարվում է փաստաթղթի անբաժանելի մասը և առանց նրա վավեր չէ:

18. Փաստաթուղթը և նրա ներդիրը վավերացվում են ԵՊՀ ռեկտորի (պրոռեկտորի), հարկ եղած դեպքում՝ նաև կրթական ծրագրի և ուսումնական ստորաբաժանման ղեկավարների ստորագրությամբ ու բուհի կնիքով:

19. Ծրագիրը չավարտողներին տրվում է տեղեկանք ուսումնառության մասին: Ավարտական փաստաթուղթ ստանալու համար նրանք կարող են դիմել և նորից անցնել դասընթացը՝ բաց թողած ժամկետի հաշվառումով (5 տարուց ավելի ժամկետի դեպքում կրկնում է ամբողջ դասընթացը):

20. ԼՄԿ ուսումնական փաստաթղթերի հաշվառումը, պահպանումը և արխիվացումը իրականացվում են ԵՊՀ-ում սահմանված կարգով:

VI. ԼՄԿ ԾՐԱԳՐԵՐԸ

21. ԵՊՀ-ում իրականացվում է ԼՄԿ երկու ծրագիր՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում, ինչպես նաև կազմակերպվում են ստաժավորում և կրթական ծառայություններ:

22. Դասախոսների որակավորման բարձրացում՝

22.1. ԵՊՀ հիմնական դասախոսական կազմը պարտադիր կարգով որակավորման բարձրացում (այսուհետ՝ ՈԲ) է անցնում յուրաքանչյուր 5 տարին մեկ:

22.2. Դասախոսների ՈԲ ծրագրի նպատակն է կատարելագործել ԵՊՀ պրոֆեսորա-դասախոսական կազմի ներուժը՝ ապահովելով նրա ընդհանուր, մանկավարժական-հոգեբանական և մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը:

22.3. Պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ-ն դիտարկվում է ն՝ որպես դասախոսի կատարելագործման բաղադրիչ՝ նրա մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացմամբ, ն՝ որպես համալսարանական կրթության որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն կառուցամաս, ն՝ որպես ԼՄԿ ծրագրերի իրականացման անհրաժեշտ հենք:

22.4. Դասախոսների ՈԲ ծրագրի խնդիրներն են՝

1. համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան,
2. զարգացնել դասախոսական կազմի ներուժը:

22.5. Ծրագրի առանձնահատկություններն են՝

1. Դասախոսների ՈԲ ծրագիրը բաղկացած է 2 կառուցամասից՝ կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական՝ պարտադիր և կամընտրական բաղադրիչներով, դասընթացների տարբերակումով:
2. Ծրագրի բաղադրիչները չափվում են ECTS կրեդիտներով: Կրեդիտային համակարգը դասախոսին հնարավորություն է տալիս որակավորումը բարձրացնելու ուսուցման անհատական պլանով՝ կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ ապահովելով իր համար նախընտրելի կոմպետենցիաների զարգացումը:
3. Ծրագրի ընդհանուր աշխատաժամալը 30 կրեդիտ է: Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հնգամյա ժամկետում:
4. Ծրագիրն ավարտվում է անհատական ատեստավորմամբ՝ ըստ սահմանված պահանջների կատարման:

22.6. ՈԲ ծրագրի կառուցվածքը, բովանդակությունը և կազմակերպման կանոնակարգը հաստատվում են ԵՊՀ գիտխորհրդի կողմից:

22.7. ԵՊՀ-ն, ստանձնելով նաև ֆինանսական պատասխանատվություն իր պրոֆեսորադասախոսական կազմի համար, միաժամանակ խրախուսում է դասախոսների կրթական նախաձեռնողականությունը (հաշվարկվում են նաև ծրագրից դուրս դասախոսի կուտակած համապատասխան կրեդիտները):

23. Մասնագիտական վերապատրաստում՝

23.1. Մասնագետների վերապատրաստման (այսուհետ՝ ՄՎ) նպատակը նրանց կողմից լրացուցիչ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումն է կրթական ծրագրերով, որոնք նախատեսում են գիտության, տեխնիկայի ու տեխնոլոգիայի առանձին բաժինների և առարկաների ուսումնասիրում՝ հարմարվելու նոր տնտեսական ու սոցիալական պայմաններին, վարելու նոր մասնագիտական

գործունեություն, ընդ որում, հաշվի առնելով նաև միջազգային պահանջները և չափանիշները:

23.2. ՄՎ ծրագրերն իրականացվում են ԵՊՀ այն մասնագիտություններով, որոնք ունեն ծրագրի պահանջներին բավարարող պրոֆեսորադասախոսական բարձրորակ կազմ, կրթական համապատասխան միջավայր և ենթակառուցվածք: Միաժամանակ կարող են իրականացվել ՄՎ-ի համատեղ ԼՄԿ ծրագրեր՝ ընդգրկելով համապատասխան բարձրորակ մասնագետներ այլ հաստատություններից:

23.3. ՄՎ-ն իրականացվում է տարբերակված ենթածրագրերով՝

1. կարճատև (մինչև 100 ժամ),
2. միջնաժամկետ (մինչև 500 ժամ),
3. երկարաժամկետ (մինչև 1000 ժամ):

23.4. Ծրագրի յուրացումն ավարտվում է ստուգարքով, քննությամբ, ավարտական աշխատանքի պաշտպանությամբ՝ ըստ սահմանված ձևաչափի:

24. Ստաժավորում՝

24.1. Ստաժավորման հիմնական նպատակը տեսական պատրաստությամբ ձեռք բերված մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձևավորումը և ամրապնդումն է պրակտիկայում: Այն իրականացվում է նաև առաջավոր փորձի ուսումնասիրման և պաշտոնական պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ մասնագիտական ու կազմակերպչական հմտությունների ձեռքբերման նպատակով:

24.2. Ստաժավորումն իրականացվում է 2 ձևով՝ անհատական և խմբային: Անհատական ստաժավորումը կազմակերպվում է ՈԲ-ի կամ ՄՎ-ի ծրագրով: Խմբային ստաժավորումն անցկացվում է մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով՝ տվյալ բնագավառի կամ հիմնարկի մակարդակով ծագած գիտական, մանկավարժական, սոցիալ-տնտեսական և այլ հիմնախնդիրների գծով: Ստաժավորման տևողությունը սահմանվում է գործատուի կողմից:

24.3. Ստաժավորումը կարող է լինել ինչպես ԼՄԿ ինքնուրույն տեսակ, այդպես և ՈԲ-ի կամ ՄՎ-ի ուսումնական պլանի բաղադրիչ: Երկրորդ դեպքում ունկնդիրը ներկայացնում է նաև ավարտական աշխատանք:

24.4. Անձը ստաժավորում է անցնում ըստ նախապես հաստատված աշխատանքային պլանի: Ավարտողները ներկայացնում են հաշվետվություն սահմանված կարգով՝ հաստատված ամբիոնի և ստաժավորման ղեկավարի կողմից:

25. Կրթական ծառայություն՝

25.1. Կրթական ծառայության (այսուհետ՝ ԿԾ) նպատակը անձի կրթական ցանկացած նեղ պահանջմունքի բավարարումն է՝ գործնական տարբեր դասընթացների ձևով, ինչպես նաև որպես ազատ ունկնդիր՝ գործող դասընթացներին մասնակցությամբ:

25.2. Ավարտողները ստանում են ԵՊՀ-ի կողմից սահմանված նմուշի հավաստագիր:

VII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

26. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին ազգային զեկույցի» շրջանակներում կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ Հայաստանում ոչ ֆորմալ կրթություն են իրականացնում ավելի քան 245 կազմակերպություններ: Վերջիններս ունեն տարբեր իրավական-կազմակերպական ձևեր, և յուրաքանչյուրն աշխատում է կամընտրովի, քանզի կատարելագործված չէ օրենսդրական դաշտը: ԼՄԿ կրթաշուկան փաստորեն արդյունավետ չի գործում, և համակարգն այդպես էլ չի կայանում: Բուհերը, մասնավորապես ԵՊՀ-ն, նախաձեռնությունը պիտի վերցնեն իրենց ձեռքը՝ խթանելով փոխհամագործակցությունը:

27. ԵՊՀ-ն ընդունում է, որ մի շարք մասնագիտություններով չի կարող մենակ իրականացնել գրավիչ և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող ԼՄԿ ծրագրեր, ուստի պատրաստ է՝

27.1. Զարգացնել գործընկերությունը տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով:

27.2. Համագործակցել այլ բուհերի, գործատուների և շահագրգիռ կազմակերպությունների հետ:

27.3. Կիրառական մասնագիտություններով իրականացնել միջբուհական ծրագիր՝ օգտագործելով հանրապետությունում առկա գիտամանկավարժական ներուժը:

27.4. Ապահովել ԼՄԿ համակարգի արդյունավետ գործառնան երեք պատասխանատուների՝ գործատուի, համալսարանի և ուսումնառուի փոխհամագործակցությունը:

27.5. Միավորել շահակից գործընկերների ջանքերը՝ լուծելու ԼՄԿ համակարգի ֆինանսավորման խնդիրը. անհրաժեշտ են և՛ բյուջետային ֆինանսավորում, և՛ գործատուների աջակցություն, և՛ ուսումնառուների ինքնաֆինանսավորում: Երկրում հիմնական գործատուն և ԼՄԿ-ի ամենամեծ շահառուն պետությունն է. ներկայացնելով գրավիչ առաջարկներ և խթանելով պետական կառույցների հետ կապերի զարգացումը՝ ԵՊՀ-ն պետք է կարողանա նրանց ընդգրկել ծրագրերի իրականացման գործում: Իսկ պետությունը, օրենսդրական նպատակամետ փոփոխություններ կատարելով, կարող է խթանել համակարգի զարգացումը և խրախուսել գործատուներին՝ իրենց շահույթից մասնաբաժին հատկացնելու սեփական կազմակերպության կադրային հզորությունը մեծացնելու համար:

27.6. Հանդես գալով որպես գործատու՝ ապահովել համալսարանի դասախոսների և մյուս աշխատողների ԼՄԿ-ի ֆինանսավորումը:

VIII. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

28. Հայեցակարգը նախատեսում է ԵՊՀ-ում ԼՄԿ համակարգի փուլային զարգացում (1-ին՝ 2018-2021թթ.): Խնդիրն այն է, որ կրթության միջազգային ռազմավարության երկու ուղղությունները՝ ուսուցման բոլոր ձևերի արդյունքների ճանաչումը և ուսուցման հենքային հմտությունների ու կրթական մոտիվացիայի զարգացումը, չնայած առանցքային գերակայություններ լինելուն, պահանջում են կարևոր նախադրյալներ՝ ազգային որակավորումների շրջանակի ներդրում, կրթական արդյունքների վավերացման գործիքակազմի մշակում և կրեդիտային համակարգի լիարժեք կիրառում, ինչպես նաև ձևավորված ավանդույթի հաղթահարում: ՀՀ-ում նախատեսվում է մինչև 2030թ. ներդնել ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմ (ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիր):
29. Ներկայացնելով ԼՄԿ զարգացման հայեցակարգը՝ ԵՊՀ-ն հավաստում է իր հանձնառությունը.
- 29.1. ԼՄԿ զարգացման հայեցակարգի հռչակումով հանդես գալ որպես երկրում նրա հիմնական գաղափարախոս.
- 29.2. Իբրև բուհ՝ պատասխանատվություն կրել իր շրջանավարտների կրթության շարունակականության և կրթական ծրագրերի որակի համար.
- 29.3. Իբրև գործատու՝ պատասխանատվություն ստանձնել իր աշխատակիցների ՈԲ-ի և նրանց ուսումնառության ծրագրերի ֆինանսավորման համար.
- 29.4. Իբրև ազգային համալսարան՝ նախադրյալներ ստեղծել ԼՄԿ ազգային ռազմավարության մշակման և լիարժեք գործառման համար.
- 29.5. Իրականացնել ԵՊՀ-ում գործող ԼՄԿ ծրագրերի պարբերական մշտադիտարկում (երկու տարին մեկ) և հանրային իրազեկում:

Հավելված

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

1. **Հարասն կրթություն**՝ անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը:

2. **Տորմալ կրթություն**՝ հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման ու դիպլոմավորման:

3. **Ոչ ֆորմալ կրթություն**՝ լրացուցիչ կրթության ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ ՀՀ օրենքներով սահմանված դեպքերի:

4. **Ինֆորմալ կրթություն**՝ անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

5. **Լրացուցիչ կրթություն**՝ կրթության տեսակ, որն ուղղված է մարդու կրթական պահանջմունքների համակողմանի բավարարմանը մտավոր, հոգևոր-բարոյական, ֆիզիկական ու մասնագիտական կատարելագործմանը և չի ուղեկցվում կրթության մակարդակի բարձրացումով:

6. **Լրացուցիչ մասնագիտական կրթություն**՝ նպատակամետ մասնագիտական ուսուցում և դաստիարակություն (պատրաստություն), մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների մակարդակի անընդհատ բարձրացում, մարդու կոմպետենցիաների ձևավորում և զարգացում ողջ կյանքի ընթացքում՝ մասնագիտական և կրթական պահանջմունքների բավարարման, սոցիալական միջավայրի մասնագիտական գործունեության փոփոխվող պայմաններին հարմարվելու, մասնագիտական որակավորման կատարելագործման և նոր տեսակի մասնագիտական գործունեության կատարման պատրաստվելու համար՝ բարձրագույն կրթության հիմքի վրա:

6. **Ունկնդիր**՝ լրացուցիչ կրթական ծրագրում ընդգրկված և ուսումնառող անձ:

7. **Սոցիալական գործընկեր**՝ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, մասնավորապես գործատուների, արհեստակցական և հասարակական այլ միավորումներ, կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնող ցանկացած կազմակերպություն, պետական և համայնքային մարմիններ: